




1000 խոշոր հարկատուների կողմից 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը գերազանցել է 1 տրլն դրամը, ինչը 32%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (գծապատկեր 1): 2022թ. մակարդակն անհամեմատ բարձր է ոչ միայն 2021թ. , այլ նաև դրան նախորդող, այդ թվում՝ տնտեսական առումով առավել բարենպաստ կամ միևնույն ժամանակահատվածի նկատմամբ:




Գծապատկեր 1. Հունվար-սեպտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, Էական փոփոխություններ են արձանագրվել նաև 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության պարագայում: Այսպես, 2022թ. նշված ժամանակահատվածում 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 291 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 95 մլրդ դրամով (գծապատկեր 2): Նույն կերպ, շուրջ 180 մլրդ դրամով կամ 38 տոկոսով ավելացել է հարկային վճարումների ընդհանուր ծավալը 100 խոշոր հարկատուների պարագայում:




Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ



Գծապատկեր 2. Հունվար-սեպտեմբեր ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2021-ի համեմատությամբ ավելի քան 30% ավելացում է արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 19,7 մլրդ դրամ՝ 2021-ի 15 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3):




Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ




Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՅԿ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2022թ. 9 ամիսների համար կազմել է 33 անգամ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ փոքր-ինչ բարձր է, սակայն միաժամանակ՝ ցածր է դիտարկվող ժամանակահատվածի մյուս տարիների համեմատությամբ: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2022-ին 155 անգամ է, ինչը ևս ավելի բարձր է, քան նախորդ տարում գրանցված հարաբերակցությունը (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՅԿ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ


2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով ՅԿ-ում գործող 188 ընկերությունն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2021-ին այդպիսի հարկատուների թիվը 150 էր, 2020-ին՝ 130, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ: Նույն կերպ, 2022-ի հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով, 377 ընկերության և կազմակերպության հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի հարկատուների թիվը 307 էր:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

2022թ. երեք եռամսյակների արդյունքներով, խոշոր հարկատուների ցանկում ներառված են ընդամենը 62 տնտեսվարող սուբյեկտներ, որոնց վճարած հարկերի ընդհանուր մեծությունը չի գերազանցում 200 մլն դրամը, մինչդեռ նախորդ տարի ցանկում ներառվել էր 262 այդպիսի հարկատու, իսկ, օրինակ, 2020թ. դրանց թիվն էլ ավելի մեծ էր՝ շուրջ 400 (գծ. 5): Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետք էր վճարել շուրջ 187 մլն դրամի հարկ, այն դեպքում, երբ 2021-ին ցանկում ներառվելու համար բավարար կլիներ 142 մլն դրամը, իսկ 2020-ին՝ 115 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը:

2022-ի հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 135 ընկերության պարագայում շահույթահարկի վճարումը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 97 էր, իսկ օրինակ 2018-ին՝ 96: Նույն կերպ, 204 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվաքանակը ավելացել է 23-ով (գծապատկեր 6):




Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի ավելացումը՝ Նախորդ տարվա համեմատ, սակայն վերջին 4 տարիների միտումը նվազման ուղղվածություն ունի: 2022թ. հունվար-սեպտեմբերին 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 31,1%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 24,5% էր (գծապատկեր 7):

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 27,6%-ը ուղղակի հարկերն են ինչը ցածր է Նախորդ մի քանի տարիների մակարդակից:




Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2022թ. առաջին 9 ամիսների արդյունքներով, 61 հակատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 1 մլրդ դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 45 էր, իսկ 2020-ին՝ 48:

2022թ. հաշվետու ժամանակահատվածում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել մոտ 567 ընկերություններ, 2021-ին հանրապետությունում գործել է 494 այդպիսի կազմակերպություն (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2022թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակիորեն տարբերվում է նախորդ տարիների պատկերից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ցանկի առաջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը

	2018	2019	2020	2021	2022
Ընդամենը, մլրդ դրամ	4.2	4.7	4.3	4.7	6.5
Շահութահարկ, մլն դրամ	701	875	656	606	971
Եկամտային հարկ, մլն դրամ	631	807	763	798	826
ՎԱՀ, մլրդ դրամ	1.6	1.87	1.8	1.95	2.36
Ակցիզային հարկ, մլն դրամ	500	628	661	541	640

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2022-ի առաջին երեք եռամսյակների արդյունքներով վճարել է 6,5 մլրդ դրամի հարկ (2021-ին՝ 4,7 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 971 մլն դրամ (2021-ին՝ 606 մլն դրամ), եկամտային




հարկը՝ 826 մլն դրամ (2021-ին՝ մոտ 800 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 2,4 մլրդ դրամ (2021-ին՝ 2 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 640 մլն դրամ (2021-ին՝ 541 մլն դրամ):

Աղյուսակ 2. Ցանկի վերջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը, մլն դրամներով

	2018	2019	2020	2021	2022
Ընդամենը	104.0	128.0	121.0	150.0	197.0
Շահութահարկ	14	19	18	16	21
Եկամտային հարկ	27	38	32	39	57
ԱԱՀ	50	60	60	73.1	87.7
Ակցիզային հարկ	2.9	2.8	3.7	6.7	2.8

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2022թ. առաջին 9 ամիսների արդյունքներով վճարել է մոտ 200 մլն դրամի հարկ (2021-ին՝ 150 մլն դրամ), շահութահարկը՝ 21 մլն դրամ (2021-ին՝ 16 մլն դրամ), եկամտային հարկը՝ 57 մլն դրամ (2021-ին՝ 39 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 88 մլն դրամ (2021-ին՝ 73 մլն դրամ):

Դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի կերպով փոխվել է նաև ցանկում ներառված հարկատուների տարածքային բաշխվածությունը: Այսպես, Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 83%-ն է, ինչը նախորդ տարիների համեմատությամբ փոքր-ինչ ավելացել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2022-ին կազմել է 73,2%, ինչը նկատելիորեն ցածր է նախորդ տարիների մակարդակից (գծապատկեր 9):



Գծապատկեր 9. Երևանի մասնաբաժինը, տոկոսներով



Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՅԿ

Այսուհաս 3-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած մի շարք կազմակերպությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2021-2022թթ. ընթացքում: Ընտրված թվով 65 կազմակերպությունների 2/3-ը վճարած հարկերի մեծությունը նախորդ տարվա համեմատությամբ ավելացրել է առնվազն 20 տոկոսով: Այստեղ կարելի է նշել հատկապես հանքահումքային, ֆինանսաբանկային, ՏՀՏ ոլորտների առաջատարներին, նաև բնական մենաշնորհի հանդիսացող կազմակերպություններին:

Այսպես, Չանգեզուրի ՊՄԿ-ն շուրջ 3 անգամ կամ 80 մլրդ դրամով շատ հարկ է մուծել, նախորդ տարվա համեմատությամբ: Նույն կերպ, Ագարակի ՊՄԿ-ն 3,5 անգամ ավելացրել է հարկային վճարումները (ավելի քան 8 մլրդ դրամով): Աճի առաջատարներից են նաև «Թել-Սել», «ԼԻՃԶՎԱԶ», «ՄԻԿՄԵՏԱԼ», «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ, «ԿԱԲԱՐԿՈ», «ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ», «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ», «ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ» ընկերությունները, որոնց հարկային վճարումները նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են ավելի քան 2 անգամ:

Դիտարկվող ժամանակահատվածում անկման ավելի բարձր մակարդակ արձանագրվել է «ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ», «ՅՈՒԶՈՄ», «ԹԵՂՈՒՏ» ընկերություններում, որոնց հարկային վճարումները նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել են 30-38 տոկոսով:



Աղյուսակ 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2021	2022	Տարբերությունը
1	«ՉԱՆԳԵՉՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	42.4	129.2	205
2	«ԳԱՉՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	38.3	41.8	9
3	«ԳՐԱՆԴ ՏՈՔԱԿՈ»	24.8	32.5	31
4	«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱՔԱԿ»	15.5	16.4	6
5	«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»	13.0	12.5	-4
6	«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	9.1	12.4	37
7	«ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ»	11.9	11.8	-1
8	«ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	3.3	11.7	254
9	«ՖԼԵՇ»	10.8	11.3	4
10	«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»	7.1	11.0	55
11	«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՅՈՒՂԻՆԳ»	7.8	10.2	31
12	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»	7.7	9.5	24
13	«ԹԵՂՈՒՏ»	13.5	9.4	-30
14	«ԼԵՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ»	0.4	9.2	2210
15	«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՕՂԱՆԱԿԱԿԱՑԱՆՆԵՐ	3.0	8.8	192
16	«ՍԻԹԻ»	5.9	8.4	42
17	«ՄԱՔՍ ՕԻԼ»	6.5	8.2	26
18	«ՍՈՖԹ ԿՈՆՏՐԱԿՏ»	5.8	8.0	38
19	«ՄՈՔԱՅԼ ՍԵՆՁԵՐ ԱՐԹ»	3.5	7.4	112
20	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	7.1	6.5	-8
21	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	4.0	6.1	53
22	«ԱՎՏՈՆԵՐԿՐՈՂՆԵՐ»	0.2	6.0	2913
23	«ԿՈԿԱ-ԿՈՒԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՍՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ»	5.2	5.9	14
24	«ՕՆԻՐԱ ՔԼԱՔ»		5.9	#DIV/0!
25	«ՄԵԳԱ ԹՐԵՅԴ»	0.2	5.8	2808
26	ԱԿԲԱ ԲԱՆԿ	4.4	5.7	30
27	«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՑԱՆ»	4.6	5.6	22
28	«ՅՈՒՔՈՍ»	8.6	5.6	-35
29	«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ»	4.8	5.4	12
30	«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»	3.8	5.3	41
31	«ԿԱԲԱՐԿՈ»	2.0	5.1	153
32	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	2.8	5.0	80



Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

33	«ԲԱՂՐԱՄՅԱՆ»	4.1	5.0	21
34	«ՉԱՄՐԱՏ ԿՊՊԱՆ»	5.5	4.7	-15
35	«ԱՎԵՐՍ»	4.4	4.3	-2
36	«ՎԵՈՒԽԱ ԶՈՒՐ»	3.6	4.3	19
37	«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	3.0	4.2	41
38	«ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ»	3.5	4.2	21
39	ԻՆԵԿՈՐՔԱՆԿ	4.2	4.2	1
40	«ԳԱՉՊՐՈՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՏՐԱՆՍԳԱՉ»	4.1	4.2	2
41	«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ»	1.7	4.2	146
42	«ԼԻՃՔՎԱՉ»	0.9	4.2	364
43	«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»	3.4	4.1	21
44	«ՍՈՂՈՒՄ ԳՐԱՆՈՒՄ»	2.7	4.1	51
45	«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»	3.5	4.0	14
46	«ՍԱՍ-ԳՐՈՒՊ»	2.9	3.9	34
47	«ԲԱՐՍԻՍ»	3.3	3.9	18
48	ԴԱՅԲԻՉՆԵՄՔԱՆԿ ՓԲԸ	3.5	3.8	9
49	«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՉՈՒՐ»	3.0	3.7	22
50	«ՄԻԿՍԵՏԱԼ»	1.0	3.6	258
51	«ԱՆԴԱԿՈ»	2.2	3.5	57
52	«ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ»	3.6	3.4	-5
53	«ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ»	2.6	3.4	32
54	«ԱԽԹԱԼԱՅԻ ԼԵՌՆԱՅԱՐՍԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	0.9	3.4	277
55	«ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	2.9	3.3	15
56	«ՍԼԱՎ ԳՐՈՒՊ»	2.9	3.3	14
57	«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ»	2.4	3.3	38
58	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ»	3.0	3.3	10
59	«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ»	1.5	3.2	115
60	«ԹԵԼ-ՍԵԼ»	0.6	3.2	434
61	«ԴԻՋԻԹԵՅՆ»	2.4	3.2	32
62	«ՔՈՆԹՈՒՐԳԼՈՔԱԼ ՀԻՂՐՈ ԿԱՍԿԱԴ»	1.9	3.1	65
63	«ՊԻԿՍԱՐՏ»	2.0	3.1	56
64	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	1.8	3.1	70
65	«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ»	4.8	3.0	-38



Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով զգալի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը գերազանցել է 1 տրլն դրամը, ինչը 32%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, 2022թ. մակարդակն անհամեմատ բարձր է ոչ միայն 2021թ., այլ նաև դրան նախորդող, այդ թվում՝ տնտեսական առումով առավել բարենպաստ կամ միևնույն ժամանակահատվածի նկատմամբ,
- ✓ շուրջ 180 մլրդ դրամով կամ 38 տոկոսով ավելացել է հարկային վճարումների ընդհանուր ծավալը 100 խոշոր հարկատուների պարագայում,
- ✓ 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 291 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է շուրջ 95 մլրդ դրամով,
- ✓ ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները կազմել են շուրջ 20 մլրդ դրամ՝ 2021-ի 15 մլրդ դրամի փոխարեն,
- ✓ 1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը կազմել է 33 անգամ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ փոքր-ինչ բարձր է, սակայն միաժամանակ՝ ցածր է դիտարկվող ժամանակահատվածի մյուս տարիների համեմատությամբ,
- ✓ 2022թ. հունվար-սեպտեմբերի արդյունքներով՝
 - ✚ ՀՀ-ում գործող 188 ընկերությունն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2021-ին այդպիսի հարկատուների թիվը 150 էր, 2020-ին՝ 130, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ,
 - ✚ 500 մլն դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների թիվը 377 է (2021-ին՝ 307),
 - ✚ 1000 խոշոր հարկատուների ցանկում 200 մլն դրամից պակաս հարկ վճարած ընկերությունները 62-ն են (2021-ին այդպիսիք 262-ն էին, 2020-ին՝ մոտ 400),



Չանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՅԿ

- ✚ 135 ընկերության վճարած շահութահարկի մեծությունը գերազանցել է 200 մլն դրամը (Նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 97 էր, իսկ օրինակ 2018-ին՝ 96),
 - ✚ 204 հարկատու գերազանցել է եկամտային հարկի՝ 200 մլն դրամի շեմը (2021-ին՝ 181),
 - ✚ 1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 27,6%-ը ուղղակի հարկերն են ինչը ցածր է նախորդ մի քանի տարիների մակարդակից: 1000 հարկատուների պարագայում նույն ցուցանիշը 2022-ին 31,1% է, ինչը էապես բարձր է 2021-ի մակարդակից (24,5%),
 - ✚ 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 567 ընկերություններ (2021-ին՝ 494, 2020-ին՝ 461):
- ✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2022-ի առաջին երեք եռամսյակների արդյունքներով վճարել է 6,5 մլրդ դրամի հարկ (2021-ին՝ 4,7 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 971 մլն դրամ (2021-ին՝ 606 մլն դրամ), եկամտային հարկը՝ 826 մլն դրամ (2021-ին՝ մոտ 800 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 2,4 մլրդ դրամ (2021-ին՝ 2 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 640 մլն դրամ (2021-ին՝ 541 մլն դրամ):
 - ✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2022-ի առաջին երեք եռամսյակների արդյունքներով վճարել է 6,5 մլրդ դրամի հարկ (2021-ին՝ 4,7 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 971 մլն դրամ (2021-ին՝ 606 մլն դրամ), եկամտային հարկը՝ 826 մլն դրամ (2021-ին՝ մոտ 800 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 2,4 մլրդ դրամ (2021-ին՝ 2 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 640 մլն դրամ (2021-ին՝ 541 մլն դրամ):
 - ✓ Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 83%-ն է, ինչը նախորդ տարիների համեմատությամբ փոքր-ինչ ավելացել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2022-ին կազմել է 73,2%, ինչը նկատելիորեն ցածր է նախորդ տարիների մակարդակից
 - ✓ Խոշոր հարկատուների ցանկում վերին հորիզոնականներ զբաղեցրած կազմակերպություններից հանրային առավել հետաքրքրություն ներկայացնող 50 հարկատուների 80 տոկոսից ավելին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացրել են վճարված հարկերի մեծությունը:



Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՅԿ

- ✓ Չանգեզուրի ՊՄԿ-ն շուրջ 3 անգամ կամ 80 մլրդ դրամով շատ հարկ է մուծել, նախորդ տարվա համեմատությամբ: Նույն կերպ, Ագարակի ՊՄԿ-ն 3,5 անգամ ավելացրել է հարկային վճարումները (ավելի քան 8 մլրդ դրամով): Աճի առաջատարներից են նաև «Թել-Սել», «ԼիճքՎԱԶ», «ՄԻԿՍԵՏԱԼ», «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ, «ԿԱԲԱՐԿՈ», «ԱՐԱՐԱՏՑԵՍԵՆՏ», «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ», «ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ» ընկերությունները, որոնց հարկային վճարումները նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են ավելի քան 2 անգամ:
- ✓ Անկման ավելի բարձր մակարդակ արձանագրվել է «ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ», «ՅՈՒԲՈՄ», «ԹԵՂՈՒՏ» ընկերություններում, որոնց հարկային վճարումները նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել են 30-38 տոկոսով: